ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ ԼՈՐԻՍԻ

ՍՈԹՔ ԳԱՎԱՌԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ ԸՍՏ ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ.գ.թ. ***Հ. Ա. Մելքոնյան***

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ. ***Ա. Հ. Հակոբյան***
պ.գ.թ. ***Դ. Հ. Միրիջանյան***

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2023 թ. հունիսի 1-ին, ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հնագիտության և ազգագրության 007 մասնագիտական խորհրդում (հասցե՝ Երևան-0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. ապրիլի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պատմական գիտ. թեկնածու ***Ա. Է. Հարությունյան***

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է պատմական Հայաստանի Սյունիք նահանգի Սոթք գավառի (Սևանա լճի հարավարևելյան ավազան, ներկայիս ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս և Ճամբարակ համայնքներ) միջնադարյան հուշարձանների ուսումնասիրությանը: Ժամանակագրական տեսանկյունից աշխատանքն ընդգրկում է վաղ, զարգացած և ուշ միջնադարը (IV-XVII դդ.): Հենվելով հնագիտական և պատմական տվյալների վրա՝ ատենախոսության մեջ տրվում են Սոթք գավառի աշխարհագրական նկարագիրը և ուսումնասիրության պատմությունը, ներկայացվում են առկա միջնադարյան հուշարձանները (ամրոցներ, բնակատեղիներ, վանքեր, եկեղեցիներ, գերեզմանոցներ), անդրադարձ է կատարվում տնտեսական զբաղմունքներին, քննարկվում են հաղորդակցական համակարգին վերաբերող խնդիրներ: Մասնավորապես ցույց է տրվում, որ Սոթքը ոսկու հանքով, համանուն լեռնացքով, և Մասրիկի բարեբեր սարահարթով կարևորագույն դեր է խաղացել միջնադարյան Հայաստանի հաղորդակցական համակարգում՝ շաղկապելով Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածքները:

Թեմայի արդիականությունը: Ատենախոսության արդիականությունը մեծապես պայմանավորված է տարածքի պատմամշակութային և քաղաքական նշանակությամբ: Այս առումով աշխատանքը գիտական հենք է ստեղծում Սևանի ավազանի մշակութային և էթնիկ գործընթացների օբյեկտիվ մեկնաբանման տեսանկյունից (հայկական տարրի առկայությունը տարածաշրջանում, մուսուլման տարրերի հայտնվելը սկսած XVIII-XIX դդ., ևն): Ատենախոսության մեջ քննարկվող խնդիրները (գավառի միջնադարյան մշակույթը, բնակավայրային համակարգը, աշխարհիկ և եկեղեցական ճարտարապետությունը, թաղման ձևերը, խաչքարերի և տապանաքարերի բնորոշ գծերը, բնակչության կենցաղը, ժամանակագրությունը) բավարար լուսաբանված չեն եղել հայագիտության մեջ, ինչը մասնակիորեն գալիս է լրացնելու ներկա աշխատանքը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Սկսած 2010 թ. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հայ-գերմանական հնագիտական արշավախումբը (համաղեկավարներ Ա. Բոբոխյան, Ռ. Կունցե) աշխատանքներ է իրականացնում Սևանի ավազանի արևելյան և հարավարևելյան հատվածում: Բացի հետախուզական աշխատանքից արշավախումբն իրականացնում է նաև պեղումներ կարևոր հուշարձաններում՝ տարածքի հնագիտական պարբերացման և ժամանակագրության վերաբերյալ ավելի հստակ պատկերացում կազմելու համար: Ատենախոսության հիմնական խնդիրն է արշավախմբի ուսումնասիրությունների արդյունքներն օգտագործել՝ համակողմանիորեն բացահայտելու միջնադարյան Սոթք գավառում ապրած մարդկանց կյանքն ու կենցաղը,

որոշակիորեն վերականգնելու բնակավայրային, պաշտպանական և հաղորդակցական համակարգերի միջնադարյան պատկերը:

Աշխատանքի գիտական նորույթը և գործնական նշանակությունը: Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- Առաջին անգամ մանրամասնորեն ներկայացվում և քննարկվում են Սոթք գավառի միջնադարյան հուշարձանների (ամրոց-բնակավայրեր, եկեղեցիներ, գերեզմաններ) պեղումների արդյունքները:
- Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում Սոթք գավառի հուշարձաններից («Սոթք-1», «Սոթք-2», «Արտանիշ-9», Սևանա լճի հատակ) ստացված միջնադարով թվագրվող ռադիոածխածնային (C14) և հնաբուսաբանական անալիզների տվյալները, «Սոթք-1»-ամրոցի, Գեղամասարի Սպիտակավոր եկեղեցու և Ադա մենաստանի եկեղեցու չափագրությունները, «Սոթք-1»-ի և Սպիտակավոր եկեղեցու տոպոհանույթները, «Սոթք-1» և «Նորաբակ-1» ամրոցների, Ադա բերդի, Սոթքի և Ազատի Ս. Աստվածածին եկեղեցիների 3D վերակազմությունները:
- Մանրամասնորեն հետազոտվում և պատկերագրական վերլուծության են ենթարկվում, թվագրվում և գիտական շրջանառության մեջ են դրվում Սոթք գավառի երկու տասնյակ նորահայտ խաչքարեր, վեց տասնյակ տապանաքարեր և չորս տասնյակ արձանագրություններ:
- Շրջանառության մեջ են դրվում գավառի միջնադարյան հնագիտական պատկերն արտացոլող քարտեզներ:
- Ներկայացվում է Սոթք գավառի բնական պաշարների օգտագործման պատմությունը և միջնադարյան հաղորդակցական ցանցը:
- Շրջանառության մեջ է դրվում գավառի վերաբերյալ գրավոր սկզբնաղբյուրների տվյալների շտեմարան:

Աշխատանքը կարող է կիրառվել միջնադարյան Հայաստանի հնագիտությանը, մշակույթին, պատմությանը և կոթողային արվեստին նվիրված աշխատանքներում, ինչպես նաև՝ Սևանի ավազանի տուրիստական երթուղիների ստեղծման ծրագրերում:

Աշխատանքի աղբյուրագիտական հենքը: Աշխատանքում օգտագործվել է շուրջ երեք հարյուր հիսուն միավոր գրականություն, որը ներառում է մատենագրական սկզբնաղբյուրները (հայ, հունա-հռոմեական, արաբական և վրացական պատմագրություն, հայերեն ձեռագրերի հիշատակարաններ և պարսկերեն հրովարտակներ, սկզբնաղբյուրները վերաբերում են Ք.ա. III - Ք.հ. XVIII դդ.), Հայաստանի և հատկապես Սևանի ավազանի միջնադարյան հուշարձաններին և հնագիտությանը, հայ միջնադարյան խաչքարային և տապանաքարային արվեստներին ու վիմագրագիտությանը նվիրված հրատարակությունները, ինչպես նաև պատմագիտական հետազոտությունները, որոնցում որոշակիորեն ներկայացված է Սոթքի իշխանական տների և Հայ Առա-

քելական Եկեղեցու պատմությունը, գավառում ծավալված պատմական տարբեր իրադարձությունները:

Աշխատանքում օգտագործված գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սոթք գավառի միջնադարյան հնագիտության և մշակույթի վերաբերյալ առկա տվյալներն ամբողջացված չեն, չկան միջնադարյան Սոթքին նվիրված առանձին համապարփակ հետազոտություններ, ամբողջացված չէ գավառի պատմությունը:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Առաջադրված խնդիրների ուսումնասիրությունն իրականացվել է հնագիտության մեջ ընդունված պատմահամեմատական և GIS մեթոդներով, օգտագործվել են նաև ռադիոածխածնային, հնաբուսաբանական և քարագիտական անալիզների տվյալներ: Ժամանակակից հնագիտության համար մեծ կարևորություն ունի աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) միջոցով ստացվող տեղեկատվությունը: Այսպես կոչված լանդշաֆտային հնագիտությունը թույլ է տալիս մշակութային երևույթները դիտարկել տարածության մեջ, բացահայտել վերջինիս ազդեցությունը հասարակությունների ձևավորման և զարգացման ընթացքի վրա: Լանդշաֆտային հնագիտության ուսումնասիրության հիմնական խնդիրներից է տեսանելության դաշտերի բացահայտումը և քարտեզագրումը, որն իրականացվում է GIS վերլուծության միջոցով: Այս մեթոդով ստացվել են Սոթք գավառի միջնադարյան պաշտպանական համակարգերի տեսանելիության դաշտերը, որով բացահայտվում են դրանց գործառույթները: Աշխատանքում օգտագործվել են Գերմանիայի Մանհայմ քաղաքի Կուրտ-Էնգելհորն արխեոմետրիկ կենտրոնում ստացված յոթ ռադիոածխածնային (C14) անալիզի տվյալներ, որոնք կատարվել են «Սոթք-1», «Սոթք-2», Սևանա լճի հատակում խորտակված նավակ և «Արտանիշ-9» հուշարձաններից վերցված նմուշներից և թվագրվել են IX-XX դդ.: Հնաբուսաբանական անալիզի են ենթարկվել «Սոթք-1», «Սոթք-2» և «Նորաբակ-1» հուշարձանների պեղումներով ստացված նմուշները, իսկ Գեղամասարի եկեղեցու պեղումներով հայտնաբերված հսկա խաչքարը ենթարկվել է քարագիտական անալիզի:

Իր բնույթով ատենախոսությունը պատմահնագիտական է: Կառուցված է ինչպես հնագիտական, այնպես էլ պատմական տվյալների համադրմամբ և մեկնաբանմամբ, որի արդյունքում գիտական շրջանառության մեջ են դրվել Սոթքի արշավախմբի կողմից ուսումնասիրված միջնադարյան հուշարձանների վերաբերյալ տվյալները, տիպաբանվել և թվագրվել են դրանց պեղումներով ձեռք բերված խեցեղենը և մյուս գտածոները, սկզբնաղբյուրների և տարբեր ուսումնասիրությունների հիման վրա ամբողջացվել է Սոթքի միջնադարյան պատմությունը:

Ատենախոսության փորձաքննությունը և հրապարակումները: Աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնում՝ արժանանալով դրա-

կան կարծիքի: Ատենախոսության վերաբերյալ զեկուցումներ են ներկայացվել հանրապետական և միջազգային գիտաժողովներում, հիմնական դրույթները հրատարակվել են շուրջ երկու տասնյակ գիտական հոդվածներում և մեկ գրքում, որոնց ցանկը ներկայացված է համապատասխան տեղում:

Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, գրականության ցանկից, տեքստային հավելվածից (հնագիտական հուշարձանների, վիմագրական և մատենագրական սկզբնաղբյուրների համահավաքներից՝ վիճակագրական տվյալների աղյուսակներով), քարտեզներից, նկարներից (հուշարձանների լուսանկարներ, չափագրություններ ու 3D վերակազմություններ) և աղյուսակներից (գտածոների լուսանկարներ, գրչանկարներ, ռադիոածխածնային անալիզներ)՝ իրենց բացատրագրերով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված է աշխատանքի գիտական նորույթը, նպատակը, հետազոտության խնդիրները, մեթոդաբանությունը, ուսումնասիրության պատմությունը, սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՍՈԹՔ ԳԱՎԱՌԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից և նվիրված է Սոթք գավառի աշխարհագրության, պատմական անցյալի հիմնական փուլերի, ուսումնասիրվածության վիճակի քննությանը:

1.1. Լանդշաֆտը և սահմանները: Գավառի աշխարհագրությունը հուշում է, որ վարչական միավորի սահմանները պարտադրված են եղել լանդշաֆտի առանձնահատկություններով և վաղ միջնադարից մինչ XX դ. առանձնապես փոփոխության չեն ենթարկվել:

1.2. Պատմական ակնարկ: IV-XVII դդ. պատմական բազմաթիվ իրադարձություններ են ծավալվել այստեղ, որոնք արտացոլվել են հայ և օտար սկզբնաղբյուրներում: Դրանք վերաբերում են ռազմաքաղաքական և մշակութային տարբեր իրադարձությունների, որոնք առանցքային կարևորություն ունեն միջնադարյան Հայաստանի պատմության ուսումնասիրության համար:

Սոթքի վերաբերյալ պահպանվել են հարուստ տեղեկություններ V-XVII դդ. հայ և օտար գրավոր սկզբնաղբյուրներում՝ «Աշխարհացոյց»-ում, «Զաւրանա-

մակ»-ում, Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Հովհան Մայրագոմեցու, Սեբեոսի, Մովսես Դասխուրանցու (Կաղանկատվացու), Ստեփանոս Կրոնավորի, Հովհաննես Դրասխանակերտցու, Ուխտանես Եպիսկոպոսի, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի, Վարդան Վարդապետի, Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբելյանի, Առաքել Դավրիժեցու, Կլավդիոս Պտղոմեոսի, Ալ-Իսթախրիի, Ալ-Մուկադդասիի, Ստեփա Տբեթցու, Յակուտ ալ-Համավիի և Վախուշտի Բագրատիոնի երկերում, հայերեն ձեռագրերի հիշատակարաններում և պարսկերեն հրովարտակներում:

1.3. Ուսումնասիրության պատմությունը: Սոթքի տարածաշրջանի պատմության առաջին ուսումնասիրությունները և հատկապես մուսուլմաններով բնակեցված գյուղերում հայկական հետքի որոնումները սկսվել են դեռևս XIX դ. կեսերին: Միջնադարյան հուշարձաններում հնագիտական ուսումնասիրություններից առաջինը Սեդրակ Բարխուդարյանի և Գևորգ Տիրացյանի 1959 թ. պեղումներն էին Ակունքի «Կլոր բլուր» ամրոցում: Ուշագրավ են հայ-իտալական արշավախմբի հետախուզական աշխատանքները և 2001 թ. պեղումները «Այրք» ամրոցում, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի հնագիտական ջոկատի 2008 թ. պեղումները Ազատի Ս. Աստվածածին եկեղեցում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից, նվիրված է Սոթք գավառի միջնադարյան հուշարձաններին՝ ամրոցներ, բնակատեղիներ, վանքեր, եկեղեցիներ և գերեզմանոցներ:

2.1. Ամրոցներ: Աշխատանքում ներկայացվում են «Սոթք-1», «Նորաբակ-1» և «Այրք» միջնադարյան ամրոցների պեղումները և «Ադա բերդ», «Ջիլ» «Ծովակ», «Ջաղացաձոր», «Մուրադխաչ», «Կլոր բլուր», «Կոլ պալ» և «Քարե դուռ» ամրոցներում կատարված հետախուզական աշխատանքները: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ամրոցների մեծ մասը կառուցվել է երկաթի և անտիկ դարաշրջաններում ու պահպանելով պաշտպանական համակարգի հիմնական հատկանիշները՝ համատարած օգտագործվել է նաև միջնադարում: Միջնադարյան Հայաստանում պաշտպանական նպատակների համար, ամրոցներից բացի, օգտագործվել են նաև պարսպապատ վանքերն ու եկեղեցիները (Մաքենյաց վանք, Ադա մենաստան, Գեղամասարի Սպիտակավոր եկեղեցի): Այդ երևույթը լայն տարածում է ստանում սկսած XI դ., երբ Հայաստանը կորցնում է անկախությունը և վանքերն իրենք են զբաղվում սեփական անվտանգության ապահովմամբ:

2.2. Բնակատեղիներ: Միջնադարյան Սոթք գավառի գլխավոր բնակավայրը իշխանանիստ և ճանապարհային հանգրվան Սոթքն էր: Դվին-Պար-

տավ ճանապարհին ձևավորված խոշոր բնակավայրեր էին նաև այսպես կոչ-ված ազատ քաղաք Մաքենիսը, Վասակաշենը (այժմ՝ ք. Վարդենիս), Այրքը և մելիքանիստ Մեծ Մասրիկը: Բնակարանի ավանդական տիպը հազարաշեն ծածկով կիսագետնափոր տներն էին: Ծովակում և Այրքում հայտնաբերվել են միջնադարում քարանձավային բնակության հետքեր: Ենթադրվում է, որ Սոթ-քում գոյություն է ունեցել նաև Հայաստանի այլ վայրերում անհայտ բնակա-րանի (բնակավայրի) մի տիպ, որն էապես տարբերվում է Հայաստանին բնո-րոշ ավանդական ձևերից: Խոսքը լճի վրա ցցաշեն տների մասին է: Այդպիսի բնակավայրերին բնորոշ ցցեր են հայտնաբերվել Գիլլի լճի ավազանում և Սևան քաղաքի առափնյա հատվածներում: Միջնադարյան բնակավայրերից համեմատաբար լավ են պահպանվել ժամանակակից գյուղերից հեռու գտնվող Ակունքի Հին Գոմերը, Նորաբակի Հին Նորաբակը, Լճավանի Գթա-շենը, Ադա մենաստանի, Սոթքի լեռնանցքի և Ծափաթաղ գյուղի ուղղությամբ՝ դեպի Փառիսոսի Դուռ լեռնանցք բարձրացող ճանապարհի բնակավայրերը:

2.3. Վանքեր և եկեղեցիներ: Ատենախոսության շրջանակում քարտեզա-գրվել են գավառի 32 եկեղեցիներ և երկու վանքեր: Մանրամասն ուսումնա-սիրվել է քրիստոնյա Հայաստանի հնագույն և նշանավոր միաբանություն-ներից ու գրչության կենտրոններից մեկը՝ Մաքենյաց վանքը, որը սկսած IV դ. գավառի հոգևոր կենտրոնն էր: Ներկայացվում են նաև Գեղամասարի Սպի-տակավոր եկեղեցում և Արտանիշ թերակղզու Ադա մենաստանում կատար-ված պեղումները:

2.4. Գերեզմանոցներ: Դաշտային աշխատանքների ընթացքում Սոթքում փաստագրվել են 61 միջնադարյան գերեզմանոցներ, որոնցից «Սոթք-1»-ում պեղվել են միջնադարի տարբեր փուլերին, իսկ «Արտանիշ-9»-ում՝ XIV-XV դդ. թաղումները:

Այս գլխում մանրամասնորեն ներկայացված են նաև գերեզմանական կո-թողները՝ խաչքարերն ու տապանաքարերը՝ ըստ ժամանակագրական և պատկերագրական առանձնահատկությունների: Սոթքը խաչքարերով հա-րուստ տարածաշրջան է: Այստեղ կարելի է տեսնել խաչքարային մշակույթի զարգացման ողջ ընթացքը՝ սկզբնավորումից (IX դ. երկրորդ կես) մինչև անկում (XVII դ. վերջ): Մաքենյաց վանքի նորոգումից (IX դ. վերջ) հետո Սոթք գավառը դառնում է խաչքարային արվեստի նշանավոր կենտրոններից մեկը: Պայմանավորված Դոփյանների հաջողություններով՝ XIII-XIV դդ. խաչքարա-գործությունը վերելք է ապրում, շրջանը վերածվում է Հայաստանի խոշորա-ծավալ խաչքարերի ամենամեծ կուտակման վայրի: Մելիք-Շահնազարյանների ռազմաքաղաքական հաջողությունները նպաստում են XV-XVII դդ. խաչքա-րագործության զարգացմանը Սոթքում, ասպարեզ են գալիս նշանավոր խաչ-քարագործ վարպետներ Մանվելը, Մելիքսեթը, Մելիքպեկը, Անանիան, Ակո-բը, Առաքելը և Օհանեսը: Սոթքից հայտնի են նաև երեք քառանիստ կոթող-ներ (երկուսը XX դ. սկզբին տեղափոխել են Թիֆլիսի Կովկասյան թանգա-

ման, իսկ երրորդը՝ Էջմիածին), որոնք բացառիկ են ուշմիջնադարյան խաչքարային արվեստում:

Սոթքը հարուստ է նաև տապանաքարերով: Այստեղ փաստագրվել են հայ միջնադարյան տապանաքարերի գրեթե բոլոր հայտնի ծավալային տիպերը՝ անմշակ, հարթ, տարատեսակ զուգահեռանիստ հիմքով և կենդանակերպ: Կան նաև յուրօրինակ՝ ծավալների չկրկնվող լուծումներով նմուշներ: XV-XVIII դդ. Սոթք գավառը դարձել է օրորոցաձև տապանաքարերի կերտման գլխավոր կենտրոններից մեկը: Այստեղ փաստագրվել են տապանաքարային բոլոր հայտնի թեմատիկ պատկերաքանդակները, կան նաև հազվադեպ հանդիպող պատկերախմբեր՝ հանգուցյալի և ընտանեկան պատկերներով:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Երրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից, նվիրված է տնտեսական զբաղմունքներին և հաղորդակցական համակարգի առանձնահատկություններին:

3.1. Խեցեգործությունը: Խեցեղենն առանձնացված է ըստ տիպաբանական, ժամանակագրական և կիրառական նշանակության (հաշվի է առնված նաև շինարարական խեցեղենը):

3.2. Տնտեսական մյուս զբաղմունքները և դրանց հետ կապված գտածոները: Սկսած հնագույն ժամանակներից մինչ ուշ միջնադար Սոթք գավառի բնակեցմանը և զարգացմանը խթանող կարևոր գործոն են եղել բարեբեր ու ընդարձակ հողերը, որոնք երկրագործության՝ մասնավորապես հացահատիկային բույսերի մշակության և անասնապահության զարգացման լավագույն պայմաններ են ստեղծել: Հնաբուսաբանական ուսումնասիրությամբ (Ռ. Հովսեփյան) Սոթքի հուշարձանների միջնադարյան շերտերից հայտնաբերվել են փափուկ ցորենի (Triticum aestivum), գարու (Hordeum vulgare), այդ թվում թեփուկավոր վեցաշարք մշակովի գարու (H. vulgare ssp. vulgare convar. vulgare) և հաճարի (Triticum dicoccum) հատիկներ: Սևանա լճի ավազանում առաջին անգամ փաստագրվել է կտավատի (Linum) առկայությունը, որը մշակվել է ինչպես ձեթի, այնպես էլ թելանյութի արտադրության համար: Կտավատի սերմի հայտնաբերումը լրացնում է Սոթք գավառում պահպանված երկու տասնյակ ձիթհանների մասին տվյալները:

Առանձին անդրադարձ է կատարվել Սոթքի ոսկու հանքի պատմությանը և միջնադարում Շորժայի կանաչ նռնաքարի՝ դահանակի (ուվարովիտ) օգտագործմանը:

3.3. Հաղորդակցական համակարգը և դրան վերաբերող գտածոները: Սոթք գավառի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի զարգացման ընթացքում որոշիչ են եղել հաղորդակցման ուղիները: Սոթքը հարևան

գավառներին կապվել է հինգ հիմնական լեռնանցքներով և դեպի Գեղարքունիք մտնող լճամերձ ճանապարհով. Արեգունի լեռնաշղթայի Կարմիրի (բարձր. ծ.մ.՝ 2176 մ) և Սևանի լեռնաշղթայի Փառիսոսի Դուռ (3125 մ) լեռնանցքներով կապվել է Ուտիքին, իսկ Արևելյան Սևանի լեռնաշղթայի Սոթքի (2366 մ), Նորաբակի (2606 մ) և Ծարի (2745 մ) լեռնանցքներով՝ Արցախին և Սյունիքին: Միջնադարում այդ ճանապարհների վրա կառուցվել են քարավանատներ, որոնց հետքերը պահպանվել են Սոթքի և Փառիսոսի դուռ լեռնանցքներում: Սոթք գավառի բնակավայրերը կարևոր դեր են խաղացել Դվին-Պարտավ միջնադարյան առևտրական ճանապարհի վրա, որը միացրել է Կուրի և Արաքսի միջև ընկած տարածքները: Տարածաշրջանով անցնող առևտրական ճանապարհի հավաստումներից են հայտնաբերված 2625 միջնադարյան դրամները (արծաթե՝ 363 ամբողջական և 2243 բեկոր, պղնձե՝ 15, ոսկե՝ 3 ամբողջական և 2 բեկոր): Սասանյան, բյուզանդական, օմայան, աբբասյան, սաջյան, շադդադյան, ելտկուզյան, վրացական, մոնղոլական, իրանական, օսմանյան և այլ դրամների գտածոները վկայում են, որ ճանապարհը բանուկ է եղել ողջ միջնադարում: Աշխատանքում վերլուծության է ենթարկվել նաև Սևանա լճի՝ որպես հաղորդակցական հանգույցի և համապատասխան նավագնացության խնդիրը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջնադարյան Սոթք գավառի մշակույթի և պատմության հետազոտության արդյունքում հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. Բնակավայրային համակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ Սոթք գավառում փաստագրված 11 ամրոցները չորս գործառույթ են իրականացրել՝ լճի առափնյա գոտով անցնող առևտրական ճանապարհի վերահսկում, ռազմավարական նշանակության լեռնանցքների պաշտպանություն, մերձակա բնակավայրերի պաշտպանություն և Սևանի ջրային ավազանի՝ նավագնացության և ձկնորսության վերահսկում: Հաշվի առնելով ամրոցների տեղադրությունը, հնագիտական միջավայրը և GIS վերլուծությամբ ստացված տեսանելության դաշտերը, կարծում ենք, որ «Ծովակ» ամրոցն իրականացրել է շրջակա բնակավայրի պաշտպանությունը, Սևանի հարավային ափով անցնող առևտրական ճանապարհի ու լճային նավագնացության վերահսկողությունը: «Նորաբակ-1»-ն իրականացրել է դեպի Արցախ անցնող առանցքային լեռնանցքներից մեկի՝ Նորաբակի վերահսկողությունը և համանուն բնակավայրի պաշտպանությունը: «Կոլ պալ», «Ջաղացաձոր», «Քարե դուռ», «Ջիլ», «Կլոր բլուր» և «Մուրադխաչ» ամրոցներն իրականացրել են մոտակա բնակավայրի պաշտպանությունը և ճանապարհի վերահսկողությունը: «Սոթք-1»-ը պատասխանատու է եղել ճանապարհի, դեպի ոսկու հանք և Արցախ մտնող լեռնանցքի, ինչպես նաև Սոթք բնակավայրի պաշտպանության համար: Հաշվի առնե-

լով «Ադա բերդ»-ի մոտակայքում բնակավայրի բացակայությունը, Սևանի ջրային ավազանի գրեթե կոնտրոնում գտնվելը և ափամերձ բլուրներից թերևս ամենամեծ տեսադաշտ ունենալը, կարծում ենք, որ ամրոցի գործառույթը գլխավորապես եղել է Սևանի նավագնացության և ձկնորսության վերահսկումը: Սոթքի ամրոցները պետք է դիտարկել Սևանի ողջ ավազանի բնակավայրային համակարգի շղթայի մեջ՝ սկսած ծայր հյուսիսից մինչ հարավային ափերը, որի կարևոր օղակներից էին Սևանավանքի ամրոցը, Ցամաքաբերդը, Բերդաց գյուղի ամրոցը, Բերդկունք ամրոցը և Հայրավանքի ազատ քաղաքի պաշտպանական ամրությունները: Մաքենյաց վանքը, Ադա մենաստանը և Սևանի ավազանի պարսպապատ մյուս վանական համալիրները ևս համարվում էին բնակավայրերը, ճանապարհներն ու լեռնանցքները պաշտպանող ամրոցների շղթայի օրգանական մասը:

2. Սոթք գավառում հաշվառվել են հինգ տասնյակ եկեղեցիներ ու մատուռներ և երկու վանական համալիրներ՝ Հայաստանի հնագույն միաբանություններից մեկը համարվող նշանավոր Մաքենյաց վանքը և Արտանիշ թերակղզու ուշմիջնադարյան Ադա մենաստանը: Սոթքի եկեղեցական ճարտարապետությունը պատկանում է Հայաստանում հնագույնը համարվող Սյունիքի ճարտարապետական դպրոցին: Եկեղեցիների հիմնական տիպը թաղակապ սրահով միանավ դահլիճ հորինվածքն է: Գավառի արևմտյան և հարավային հատվածի եկեղեցիները կառուցված են տեղական կոփածո որձաքարով, իսկ արևելյան ափի եկեղեցիները համատարած սպիտակավուն կրաքարից են՝ ներքուստ սվաղված պատերով ու հատակով: Հաշվի առնելով կառուցման տեխնիկան և դրանց հնագիտական միջավայրը, եկեղեցիները մեծամասամբ վերաբերում են IX-X և XII-XIV դդ.՝ Սևանի ավազանում ծավալված եկեղեցաշինական վերելքի շրջաններին: Գավառի հոգևոր կենտրոնը, հավանաբար սկսած IV դ., Մաքենյաց վանքն է, որը X-XV դդ. ընդգրկվել է Սյունյաց (Տաթևի) մետրոպոլիտության կազմում, հետագայում կրկին անջատվել՝ որպես Մաքենյաց վանքի եպիսկոպոսական թեմ:

3. Դաշտային աշխատանքների ընթացքում Սոթք գավառում փաստագրվել են 61 միջնադարյան գերեզմանոցներ, որոնք ըստ GIS վերլուծության գտնվում են 2030 մ միջին բարձրության վրա, վանքերի ու եկեղեցիների շրջակայքում, բնակավայրերի մոտակա բլրակներին կամ հատուկ այդ նպատակի համար առանձնացված տարածքներում: Միջնադարի տարբեր փուլերին վերաբերող երեք տասնյակ հիմնահողային, քարածածկ և սալածածկ թաղումներ են պեղվել «Սոթք-1»-ում, «Արտանիշ-9»-ում, Ազատի Ս. Աստվածածին եկեղեցու բակում և Ակունքի «Կլոր բլուր»-ում:

4. Ատենախոսության շրջանակում կատարված դաշտային ուսումնասիրությունների արդյունքում Սոթք գավառի 19 բնակավայրերում հայտնաբերվել են հիշատակագրային և շինարարական բովանդակությամբ 35 նորահայտ վիմագրեր (Արեգունի, Գեղամասար, Կախակն, Կուտական, Տրետուք, Շատջրեք և Ջա-

ղացածոր բնակավայրերում վիմագրեր հայտնաբերվել են առաջին անգամ): Դրանցից 14-ն ունեն թվական. վաղագույնը՝ 936 թ. (խաչքար Գեղամասարում), ամենաուշը՝ 1705 թ. (տապանաքար Սոթքում): Արձանագրություններում հիշատակված են 22 անձնանուն, որոնցից 9-ը (Ելնտիլ, Խիզան, Մալկարիոս, Շահզար, Պանտիր, Ջանփաշա, Սմընկուլ, Սրհանգ, Քեսար և Թուլիկ) հայ միջնադարյան սկզբնաղբյուրներում առաջին անգամ են հանդիպում:

5. Սոթք գավառի միջնադարյան խեցեղենի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նյութի մեծամասնությունը տնայնագործական արտադրանք է, աչքի է ընկնում պատրաստման անվարժությամբ, խեցու վատ որակով, արտաքին տեսքի կոպտությամբ և անհամաչափություններով: Անոթները տարբեր չափի ու ձևի են՝ կարասներից մինչև փոքրիկ թասեր, ափսեներ և աղամաններ: Կարասներն ունեն փոքր չափեր և հիմնականում վերաբերում են ուշ անտիկ - վաղմիջնադարյան շրջանի թաղումներին: Հեղուկների՝ մասնավորապես գինու պատրաստման և պահման համար նախատեսված մեծ կարասներ չեն հանդիպում, ինչը ցույց է տալիս կլիմայով պայմանավորված գինեգործության բացակայությունը Սոթք գավառում: Առավել տարածված են երկրագործությունից և անասնապահությունից ստացվող չոր մթերքների պատրաստման, պահման և տեղափոխման համար նախատեսված կճուճները և հիմնականում ջրի տեղափոխման համար նախատեսված սափորները: Մեծամասնություն է կազմում ամենօրյա սեղանի սպասքը (թասեր և ափսեներ): Ջնարակած խեցեղենը փոքրաթիվ է: Ժամանակագրական առումով խեցեբեկորները վերաբերում են վաղ միջնադարից (IV-V դդ.) մինչև ուշմիջնադարին (XV-XVIII դդ.), սակայն մեծամասնություն է կազմում XIII-XIV դդ. խեցեղենը (Սոթք գավառի ծաղկման շրջանն է՝ Դոփյանների հզոր իշխանության տարիներին):

6. Սոթքի տնտեսական նշանակությունը էապես պայմանավորված է եղել ոսկու հանքավայրի առկայությամբ: Հանքը շահագործվել է Ք.ա. II հազարամյակից՝ ընդհատումներով մինչև Ք.հ. XIV դ., ապա կրկին հայտնաբերվել է XX դ.: Պատմահնագիտական և երկրաբանական ուսումնասիրություններով հաստատվում է նաև, որ ուշ միջնադարում՝ մասնավորապես XVII դ. Սոթք գավառի Շորժա (Խորժա) բնակավայրում կորզվել է խիստ հազվագյուտ ակնաքար համարվող կանաչ նռնաքար՝ դահանակ (ուվարովիտ):

7. Սոթք գավառը եղել է միջնադարյան Հայաստանի ճանապարհային կարևոր հանգուցակետերից մեկը: Այստեղով է անցել Դվին-Պարտավ միջնադարյան առևտրական ճանապարհը: Իրականացված հնագիտական աշխատանքները հաստատում են Սոթքի խաղացած առանցքային դերը Հայկական լեռնաշխարհի ընդհանուր հաղորդակցական համակարգում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՑՈԼՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Գրիգորյան Ա. 2016, Սևանա լճի հարավային ավազանի մշակույթն անտիկ դարաշրջանում, Մինասյան Է. և ուրիշ. (խմբ.), ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Հասարակական գիտություններ, № 1.5 (15), Երևան, ԵՊՀ հրատ., էջ 63-66:
2. Գրիգորյան Ա. 2017, Սոթքի տարածաշրջանի անտիկ և միջնադարյան հուշարձանները, Ավետիսյան Պ. և ուրիշ. (խմբ.), Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 2, Հաբիտուս, Մարդաբանական և հնագիտական ուսումնասիրություններ 2, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 249-263:
3. Գրիգորյան Ա. 2018, Արտակարգ իրավիճակները և ճգնաժամային կառավարման միջոցառումները միջին դարերում (ըստ վիմական սկզբնաղբյուրների), «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածու, № 13, էջ 238-244:
4. Գրիգորյան Ա. 2018, Սոթքի միջնադարյան հուշարձանները և պատմաճարտարապետական կոթողները, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Հասարակական և հումանիտար գիտություններ, Ավետիսյան Յ. և ուրիշ. (խմբ.), № 1.3 (26), Երևան, ԵՊՀ հրատ., էջ 217-221:
5. Գրիգորյան Ա. 2019, Նորահայտ վիմագրեր Սոթքի տարածաշրջանից, Սարգսյան Գ., Հարությունյան Ա. (խմբ.), Սեդրակ Բարխուդարյան-120. գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 56-64:
6 Գրիգորյան Ա. 2019, Սոթք-1 ամրոցը և Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի սոթքյան հատվածը, Ավետիսյան Պ. և ուրիշ. (խմբ.), Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 3, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 117-124:
7. Գրիգորյան Ա. 2020, Պատմական Սոթքի վերաբերյալ միջնադարյան հայ պատմիչների հիշատակությունները, Պատմաբանասիրական հանդես, № 2, էջ 186-206:
8. Գրիգորյան Ա. 2021, Իշխանանիստ Սոթքը. պատմությունը և հուշարձանները, Պատմաբանասիրական հանդես, № 1, էջ 125-144:
9. Նալբանդյան Ա., Մեշինյան Ա., Գրիգորյան Ա. 2022, «Երկիր և մշակույթ» կազմակերպության հուշարձանապահպան գործունեությունը Գեղարքունիքում և համագործակցությունը թանգարանների հետ, Ծովային Հայաստան: Ուդուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը, Բադալյան Մ., Մարտիրոսյան-Օլշանսկի Ք., Բոբոխյան Ա. (խմբ.), Երևան, ՀԱԻ հրատ., էջ 42-49:
10. Գրիգորյան Ա., Հարությունյան Ա., Հախվերդյան Ա., Հովհաննիսյան Ա., Հարությունյան Մ., Դավեյան Հ., Բոբոխյան Ա. 2022, Սրբազան տարածքի

կերպափոխումը Գիլլի լճի ավազանում. վիշապից դեպի Սպիտակավոր, Ծովային Հայաստան: Ուդուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը, Բադալյան Մ., Մարտիրոսյան-Օլշանսկի Ք., Բոբոխյան Ա. (խմբ.), Երևան, ՀԱԻ հրատ., էջ 432-448:
11. Բոբոխյան Ա., Կունցե Ռ., Մելիքսեթյան Խ., Ամիրյան Մ., Դանիելյան Հ., Վանյան Հ., Սիմոնյան Հ., Գրիգորյան Ա., Հովսեփյան Ռ. 2022, Սոթքի տարածաշրջանի բնակեցման հիմնական փուլերը, Ծովային Հայաստան: Ուդուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը, Բադալյան Մ., Մարտիրոսյան-Օլշանսկի Ք., Բոբոխյան Ա. (խմբ.), Երևան, ՀԱԻ հրատ., էջ 125-135:
12. Արևշատյան Ս., Գրիգորյան Ա. 2022, Սևանա լճի հարավարևելյան ավազանի խաչքարային մշակույթը, Սոթք. հողի մշակութային հիշողությունը, Բոբոխյան Ա., Կունցե Ռ., Գրիգորյան Ա., Հովսեփյան Ռ. (խմբ.), Երևան, ՀԱԻ հրատ., էջ 68-94:
13. Հմայակյան Մ., Գրիգորյան Ա. 2022, Այրք ամրոցի հնագիտական համատեքստը. որոնումներ հայ-իտալական արշավախմբի հետքերով, Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք, Ղարիբյան Ն. (խմբ.), № 2 (13), էջ 15-40:
14. Գրիգորյան Ա., Բոբոխյան Ա. 2022, Օպերացիա «Զոդ». ինչպես Հայաստանը 1919-ին պահեց Սոթքի բնագիծը, Նալբանդյան Գ., Հակոբյան Ա., Բադալյան Գ. (խմբ.), Երևան, «Newmag» հրատ., 404 էջ:

ГРИГОРЯН АВЕТИС ЛОРИСОВИЧ

ПРОВИНЦИЯ СОТК В СРЕДНЕВЕКОВЬЕ СОГЛАСНО ИСТОРИКО-АРХЕОЛОГИЧЕСКИМ ДАННЫМ

Резюме

Диссертация посвящена изучению средневековых памятников провинции Сотк Сюникской области исторической Армении. Исследуемый регион расположен в Гегаркуникской области РА, включая восточные берега озера Севан. Хронологические границы диссертации охватывают все средневековье - с IV по XVII века.

Изучение системы поселений Соткской провинции указывает на то, что крепости в основном выполняли четыре функции: контроль торговой дороги, охрана военных перевалов, охрана близлежащих населенных пунктов и контроль судоходства и рыболовства в бассейне Севана.

Традиционным типом средневекового жилища в Сотке были полуземляные дома с крышей типа “азарашен”, встречаются также следы пещерных жилищ и свайных построек. Церкви имеют планировку однонефного сводчатого зала. В западной и южной частях провинции церкви построены из

базальта, а на восточном побережье - из белого известняка с оштукатуренными стенами и полами. Большинство церквей относятся к IX-X и XII-XIV векам, периодам церковного подьема в бассейне Севана. Духовным центром провинции, вероятно с IV века, был монастырь Макеняц.

В рамках диссертации были также изучены средневековые могилы. Раскопки свидетельствуют о наличии ямных, каменных и плитчатых погребений. Могильники Сотка богаты хачкарами. Здесь можно видеть весь процесс развития хачкарной культуры, от начала (вторая половина IX века) до ее упадка (конец XVII века). После реконструкции монастыря Макеняц (конец IX века) Соткская провинция стала одним из известных центров хачкарного искусства. Благодаря успехам Допянов, в XIII-XIV вв. хачкарное дело снова оказалась на подъеме, регион стал местом наибольшего скопления крупных хачкаров в Армении. Военные и политические успехи Мелик-Шахназарянов в Сотке также способствовали развитию хачкарного дела в XV-XVII вв., когда на сцене появились известные мастера-камнерезы Манвел, Меликсет, Мелик-пек, Анания, Акоб, Аракел и Оганес. Сотк также богат надгробиями: здесь зафиксированы почти все известные объемные типы армянских средневековых надгробий (грубые, плоские, с различными основаниями в виде параллелограмма и зооморфные). В XV-XVIII вв. провинция Сотк стала одним из основных центров создания надгробий в форме колыбели.

В рамках диссертации также введены в научный оборот 35 новообнаруженных эпиграфических надписей, найденных в 19 населенных пунктах Соткской провинции. Самый ранний из них датируется 936 г. (хачкар из Гегамасара), самый поздний - 1705 г. (надгробие в Сотке). В надписях упоминаются 22 личных имени, 9 из которых впервые встречаются в средневековых армянских источниках.

Изучение керамики, найденной при раскопках средневековых памятников Соткского района, показывает, что большая ее часть использовалась в быту. Керамика отличается неискусностью создания, плохим качеством, грубостью внешнего вида, непропорциональностью. Сосуды бывают разных размеров и форм, от кувшинов до небольших мисочек, тарелок и солонок. Наиболее распространены сосуды, предназначенные для приготовления, хранения и перевозки сухих продуктов - в основном кувшины, предназначенные для перевозки воды, и бытовая посуда (миски и тарелки). Поливной посуды немного. Хронологически керамика относятся к периоду от раннего до позднего средневековья, в основном к XIII-XIV векам.

Важным фактором, способствовавшим заселению и развитию Соткской провинции были плодородные и обширные земли, создававшие наилучшие условия для земледелия, особенно выращивания зерновых культур и развития животноводства. Согласно археологическим исследованиям, на средневеко-

вых памятниках Сотка были обнаружены зерна мягкой пшеницы, ячменя и полбы. Роль Соткского золотого рудника также была очень важна для экономического роста региона.

Сотк был соединен с соседними областями пятью основными горными перевалами и дорогой, ведущей вдоль озера в Гегаркуник. Перевалами Кармир (2176 м) Арегунского хребта и Парисос (3125 м) Севанского хребта регион был соединен с Утиком, а перевалами Сотк (2366 м), Норабак (2606 м) и Цар (2745 м) с Арцахом и Сюником. В средние века по этим дорогам строились караваны, следы которых сохранились на горных перевалах Сотк и Парисоси Дур. Поселения Соткской провинции играли важную роль на средневековом торговом пути Двин-Партав, соединявшем территории между Курой и Араксом. 2625 серебряные, медные и золотые монеты, найденные в бассейне озера Севан, являются одними из доказательств существования торгового пути и развитого денежного оборота.

GRIGORYAN AVETIS LORIS

SOTK PROVINCE DURING THE MIDDLE AGES ACCORDING TO HISTORICAL AND ARCHAEOLOGICAL DATA

Summary

The present dissertation is dedicated to the study of the medieval sites of Sotk province of Syunik region of historical Armenia. The study area is located in Gegharkunik province of RA, taking the eastern shores of Lake Sevan. The chronological boundaries of the dissertation include the entire Middle Ages - from the 4th to the 17th centuries.

The study of the settlement system of Sotk province indicates the fortresses had four main functions: control of the commercial route passing along the shore of the lake, protection of mountain passes, protection of nearby settlements and control of shipping and fishing in the Sevan water basin.

The traditional type of medieval house in Sotk was the semi-earthen house with a “hazarashen” roof. Traces of cave dwellings and stilt houses on the lake are also fixed. The churches are designed as one-nave halls with a main vaulted hall. In the western and southern parts of the province they are built with basalt, while on the eastern coast they are made of white limestone, with plastered walls and floors. Most of the churches belong to the 9-10th and 12-14th centuries, the periods of the church-building rise in the Sevan basin. The spiritual center of the province, probably since the 4th century, was the Makenyats monastery.

The medieval graves were also studied within the framework of the dissertation. The excavations demonstrate the presence of pit, stone-covered and slab-covered burials. The burial grounds of Sotk are rich in khachkars. Here the

whole process of the khachkar-making culture can be traced, from its beginning (the second half of the 9th century) to its decline (the end of the 17th century). After the renovation of the Makenyats monastery (end of the 9th century), Sotk province became one of the famous centers of khachkar-making art. Due to the success of Dopians in XIII-XIV centuries khachkar production was on the rise again, the region became the place of the largest accumulation of large-scale khachkars in Armenia. The military and political successes of the Melik-Shahnazarian rule in Sotk also contributed to the development of khachkar-carving during the 15-17th centuries. The famous khachkar-carving masters Manvel, Melikset, Melik-pek, Anania, Akob, Arakel and Ohanes are known from this period. Sotk is also rich in tombstones. Here, almost all the well-known types of Armenian medieval tombstones have been documented: crude, flat, with various parallelogram bases and zoomorphic shapes. During XV-XVIII centuries the Sotk province became one of the main centers of creating crib-shaped tombstones.

Within the framework of the dissertation, 35 new epigraphic inscriptions are put into scientific circulation which were discovered in 19 settlements of Sotk province. The earliest dates to the year 936 (Khachkar in Geghamasar) and the latest to the year 1705 (tombstone in Sotk). There are 22 personal names mentioned in inscriptions, 9 of which are found for the first time in early medieval Armenian sources.

The study of the pottery found during the excavations of the medieval sites of Sotk province indicates that most of it is a domestic product, notable for its unskilled preparation, poor quality, roughness of its appearance, and disproportionality. Vessels are of different sizes and shapes, from jars to small bowls, plates and salt shakers. The most common are the pots intended for the preparation, storage and transportation of dry foods, mainly the jugs intended for the transportation of water, and the everyday tableware - bowls and plates. There is a small number of glazed pottery. Chronologically, the pottery refers to the period from the early to the late Middle Ages, but the majority belong to the 13-14th centuries.

Concerning the economy, an important factor promoting the settlement and development of Sotk province was the fertile and extensive lands, which created the best conditions for agriculture, especially the cultivation of grain crops and the development of animal husbandry. Grains of soft wheat, barley and beech were found during the excavations of the medieval sites of Sotk. The role the Sotk gold mine was also very important for economic grouth of the region.

Sotk was connected to the neighboring regions by five main mountain passes and the lakeside road leading to Gegharkunik. Through the passes of Karmir (2176 m) of the Areguni mountain range and Parisos Dur (3125 m) of the Sevan

mountain range it was connected to Utik, while through the passes Sotk (2366 m), Norabak (2606 m) and Tsar (2745 m) of the Eastern Sevan mountain range to Artsakh and Syunik. During the Middle Ages, caravans were built on these roads, traces of which have been preserved in the mountain passes of Sotk and Parisosi Dur. The settlements of Sotk province played an important role in the Dvin-Partav medieval trade route, which connected the lands between the Kura and Araxes rivers. 2625 medieval coins of silver, copper and gold found in the Sevan basin are among the proofs of the trade route and developed monetary circulation.